



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2020 թվականի թիվ 9-Ս

ք. Երևան

«ՍՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2020 թվականի հունվարի 15-ին հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից հեռուստառադիոընկերությունների գործունեության մշտադիտարկում իրականացնելիս արձանագրվել է «ՍՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) «Նոր Հայաստան» հեռուստածրագրի կողմից «Toto gaming.am» և «Armenia lottery» վիճակախաղերի կամ վիճակախաղի կազմակերպչի գովազդի հեռարձակման ժամանակ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2020 թվականի հունվարի 15 -ին Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Ընկերության «Նոր Հայաստան» հեռուստածրագրի կողմից 2020 թվականի հունվարի 12-ին «Toto gaming.am» (Ժամը՝ 23:11:45-ին, 23:25:00-ին և 23:27:28-ին), հունվարի 13-ին «Armenia lottery» (Ժամը՝ 23:09:18-ին, 23:27:44-ին և 23:29:28-ին) և հունվարի 14-ին «Armenia lottery» (Ժամը՝ 23:12:04-ին, 23:26:08-ին և 23:30:11-ին) վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին գովազդային հոլովակները եթեր են հեռարձակվել մեկ ժամվա ընթացքում երեք անգամ՝ խախտելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջը:

Հանձնաժողովը 2020 թվականի հունվարի 15-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Ընկերությանը և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները և անհրաժեշտ է նաև ներկայացնել արձանագրությամբ նշված ժամանակահատվածի եթերի ձայնագրությունները:

Վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովը դիմել է նաև, վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա տրամադրող պետական լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, «Toto gaming.am» և «Armenia lottery» վիճակախաղերի կազմակերպիչների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով, որին ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը տեղեկացրել է, որ «Toto gaming.am» և «Armenia lottery» լոզոներն օգտագործվում են մեկ վիճակախաղի կազմակերպչի՝

«ԴԻՋԻԳԵՅՄ» ՍՊԸ-ի կողմից, որին տրամադրվել է վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա (ՀՀ ֆինանսների նախարարի 27.10.2017թ-ի թիվ 538-Ա հրամանով, թիվ ՎԽ-025 լիցենզիա):

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը ներկայացրել է իր պարզաբանումները, համաձայն որի՝ «Նոր Հայաստան» հեռուստաօրագրի կողմից «Գովազդի մասին» ՀՀ օրենքի նշված հոդվածների խախտումները թույլ են տրվել տեխնիկական վրիպակի պատճառով: Խախտման հայտնաբերումից անմիջապես հետո կատարվել են բոլոր անհրաժեշտ քայլերը այն վերացնելու համար: Ընկերությունը ձեռնարկել է բավարար միջոցներ հետագայում նման խախտումները բացառելու նպատակով: Ներկայացվել է նաև արձանագրությամբ նշված ժամանակահատվածի եթերի ձայնագրությունները:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է իր դիրքորոշումն առ այն մասին, որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի ձևակերպումը հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված իրավական որոշակիության սկզբունքին և չի կարող իրավակիրառողի համար իրավական հետևանքներ առաջացնել: Օրենքի նշված հոդվածը, մասնավորապես, դրանում օգտագործված «այդ ժամանակահատվածում» բառակապակցությունը իրավակիրառողի համար հակասական մեկնաբանությունների տեղիք է տալիս, քանի որ դրանում հստակորեն չի արտացոլվում, թե որ ժամանակահատվածի մասին է խոսքը: Հստակեցված չէ, թե մեկ ժամկա ընթացքում ոչ ավելի քան 2 (երկու) անգամ և առավելագույնը 60 (վաթսույն) վայրկյան տևողությամբ հեռարձակման հնարավորությունը վերաբերում է մանկապատանեկան հաղորդումներին, թե 22:00-ից 07:00-ն ընկած ժամանակահատվածին: Նույնաբովանդակ շփոթություն է առաջացնում նաև հոդվածում օգտագործված «ընդհանուր տևողություն» բառակապակցությունը: Օրենքի հոդվածի տառացի նշանակության մեկնաբանությունը իրավակիրառողին հնարավորություն չի տալիս հստակորեն որոշել Օրենքի շրջանակներում իր կողմից կատարվելիք իրավաչափ գործողությունները:

Ընկերությունն անդրադարձել է նաև պատասխանատվության միջոցների կիրառմանը և նշել, որ նշված հոդվածի պահանջը խախտելու համար տուգանք է սահմանված ոլորտը կարգավորող երկու տարբեր իրավական ակտերով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 20-րդ մասով, ինչպես նաև հստակեցված չէ, թե առաջարկվող պատասխանատվության միջոցը պետք է կիրառվի միաժամանակ բոլոր սուբյեկտների նկատմամբ (այսինքն՝ համապարտ պատասխանատվություն պետք է կրեն), թե առանձին-առանձին միայն այն կազմակերպությունների դեկավարների նկատմամբ, որոնք կխախտեն սահմանված պահանջները և հստակեցված չէ նաև, թե ինչ ընթացակարգով է կիրառվելու նշված պատասխանատվության տեսակը:

Ամփոփելով փաստարկները, Ընկերությունը նշելով օրենքի հոդվածի անորոշ ձևակերպումները և այն հանգամանքը, որ թե իրավական տեխնիկայի՝ հոդվածի շարադրանքի, թե իմաստային առումով, հոդվածը շփոթությունների և տարակարծության տեղիք է տալիս՝ իրավակիրառողի համար ստեղծելով միանգամայն անորոշ իրավիճակ, խնդրել է կարճել Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Ձանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, տեղեկատվության բնագավառը կարգավորող այլ իրավական ակտերը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստառադիոընկերությունների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն է:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է.

«10. Յուրաքանչյուր հեռուստահաղորդակցության ալիքով հեռարձակվող յուրաքանչյուր վիճակախաղի գովազդը թույլատրվում է ժամը 22:00-07:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ ռադիոյով՝ ժամը 08:00-20:00-ն ընկած ժամանակահատվածում: Գովազդը չի թույլատրվում մանկապատանեկան հաղորդումներին նախորդող և հաջորդող մեկ ժամվա ընթացքում: Այդ ժամանակահատվածում գովազդի ընդհանուր տևողությունը, այդ թվում՝ գովազդային հաղորդումները և գովազդային տեղեկատվությունները վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին, չի կարող գերազանցել 3 րոպեն, որը մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի, և ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 60 վայրկյանը:» Նշված նորմն ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից:

Հանձնաժողովը հաշվի առնելով այն, որ հեռուստառադիոընկերությունների կողմից նշված իրավական դրույթը՝ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի 1-ին պարբերությունը կարող է ոչ բավարար հստակ և տարաբնույթ ընկալվել 2019 թվականի դեկտեմբերի 16-ին «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթների կիրառման վերաբերյալ տվել է պաշտոնական պարզաբանում, որտեղ հստակ պարզաբանվել է, որ յուրաքանչյուր թվային եթերային հեռուստաձրագրի եթերում ժամը 22:00-07:00-ն ընկած ժամանակահատվածում հեռարձակվող յուրաքանչյուր վիճակախաղի գովազդի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 3 րոպեն, որը մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի, և ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 60 վայրկյանը,

որը տարաբնույթ չի կարող ընկալվել: Պաշտոնական պարզաբանումը հրապարակվելուց հետո Հանձնաժողովը հրավիրել է հեռուստառադիոընկերություններին և ևս մեկ անգամ տեղեկացրել է պարզաբանված հարցերի մասին, ինչպես նաև պատասխանել է հեռուստառադիոընկերությունների կողմից բարձրացված հարցերին:

Հետևաբար Ընկերության այն պնդումը, որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի ձևակերպումը հստակ չէ և իրավակիրառողին հնարավորություն չի տալիս հստակորեն որոշել Օրենքի շրջանակներում իր կողմից կատարվելիք իրավաչափ գործողությունները, սխալ է, քանի որ Հանձնաժողովի կողմից տրված պաշտոնական պարզաբանմամբ հստակեցվել է տվյալ նորմը:

Հանձնաժողովն անհիմն է համարում նաև Ընկերության այն դիրքորոշումը, որ նույն խախտման համար միաժամանակ տուգանք է սահմանված ոլորտը կարգավորող երկու տարբեր իրավական ակտերով, քանի որ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները խախտելու համար պատասխանատվության միջոցները սահմանված են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով, իսկ Հանձնաժողովն իր լիազորություններն իրականացնելիս ղեկավարվում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով:

Հանձնաժողովն ամրագրում է, որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի համաձայն գովազդային հաղորդումները և գովազդային տեղեկատվությունները վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի, իսկ ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ «Նոր Հայաստան» հեռուստածրագրի եթերում մեկ ժամվա ընթացքում գովազդային հաղորդումները և գովազդային տեղեկատվությունները վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին հեռարձակվել է երեք անգամ: Այսպիսով, Ընկերության կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 20-րդ մասի հատկանիշներին:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի համաձայն՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, լիցենզիայի պայմանների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումների կրկնակի դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին Հանձնաժողովին գրավոր տեղեկացնելու դեպքում Հանձնաժողովն իր որոշմամբ իրավասու է կիրառելու գրավոր նախազգուշացում կամ տուգանք:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 20-րդ մասը սահմանում է.

«20. Հեռուստառադիոընկերությունների կողմից այն ապրանքատեսակների և ծառայությունների գովազդի հեռարձակումը, որոնց գովազդն արգելված է «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝

առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի 1-ին մասով և 60-րդ հոդվածի 20-րդ մասով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 20-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄՈ ԹԻՎԻ ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

14 փետրվարի 2020թ.

ք. Երևան